

ընտանանում ենք նոցա հետ ոգով: Նոցա ապ-
նիւ օրինակը շատ անգամ մեզ նեցուկ և
հրահանգ է լինում մեր զործողութիւնների
մէջ:

Վերջապէս Փրկչի երկրաւոր կեանքից տե-
սարաններ ներկայացնող պատկերները կեն-
դանի յիշեցնում են մեզ Աստուածային Վար-
դապետի մեզ աւանդած օրէնքը թէ «Աս-
տուածային» հրաշալի աշխարհը կտամ ձեզ,
անտրտումս սուրբ զոյութեան աշխարհը, մի-
այն թէ կատարեցէք անաշխատ օրէնքը—սի-
րեցէք ընկերին իբրեւ ձեր անձին: Եթէ ձեզ
համար զնած հասարակ պատկերը, քանի մի
տարուց յետոյ, կձանձրացնէ ձեզ, զնեցէք մի
ուրիշ առաւել լաւ: Այդ լաւ նշան է, որ
ցոյց է տալիս թէ ձեր մէջ զարդանում է գե-
ղեցկութեան ճաշակը:

Այդ է ահա սեփական տանդ պատերը
պատկերներով զարդարելու օգուտը: Եթէ մի-
ջոցները ներում են պատկերներին շրջանակներ
շինելու, լաւ՝ շինել տուէք: Իսկ եթէ ոչ—
գամեցէք նոցա պարզապէս պատի վրայ:

Միարիւններն երևի չափազանց ուրախ են,
որ նոցա նկարները լուսանկարչական և փորա-
գրական ձևով այժմ ընդհանրապէս մատ-
չելի շքեղութիւն են դարձել: Լուսանկարիչ-
ները, տախտակի պղնձի վրայ փորագրողները
լաւ միջնորդներ են դարձել գեղարհեստները
ժողովրդի մէջ տարածելու: Հռչակաւոր նը-
կարիչների պատկերներն այժմ արդէն հա-
րուստների բացառիկ սեփականութիւն չեն
կազմում փորագրութիւնը տեղափոխեց նոյն
պատկերները վիմագրական ձևով ամենահա-
մեստ գիւղացիների խրճիթների մէջ անգամ:

Ահա այն պատճառները թէ ինչի մենք ա-
մենքս անշուշտ պիտի ուսումնասիրենք տպրե-
լու արհեստը: Այս արհեստն իմանալով նաև
բոլորովին չունեւոր մարդիկը կկարողանան
կեանքից ուրախութիւն և վայելչութիւն բա-
տանար: Սակայն ամեն բան նոյն ինքն մար-
դուց կախումն ունի, նա անդադար իր մէջ
ոգու ուրախ տրամադրութիւն պիտի պահպա-
նէ, պիտի պատերազմէ կրքերի դէմ, զսպէ

գիւրագրողութիւն, մի խօսքով պիտի կրթէ
իրան, մշակէ իր բարի յատկութիւններ և
հակմունքն, որոնք յաճախ ննջում են մեր մէջ,
պիտի աւելի կարգայ լաւ գրքեր, պիտի ապրէ
աղնիւ, բարեբարոյ մարդիկների շրջանում,
պիտի աշխատէ հասարակութեան յարգանք
ձեռք բերել և բարի օրինակ լինի երիտասարդ-
ների համար:

Ուրեմն տպրելու արհեստը կարող է զա-
նազան ձևերով երեւել: Սա որոշւում է սա-
կաւ բառերով, պէտքէ իմանալ օգուտ քաղել
մեզ շրջապատող ամեն բանից, առանց ար-
համարհելու նաև մանր բաները: Եթէ մեր մէջ
այս ընդունակութիւնը մշակենք, մենք մի ա-
ռանձին հրճուանքով կնայենք մեր առանին
կեանքին և միևնոյն վայելչութեամբ կգրօսենք
հարուստ դրացի անտառների մէջ այնպէս,
իբրեւ թէ մեզ պատկանում լինէին: Սղը, ա-
րեգակը, գաշտափայրերի կանաչը, երկնքում
անցուղարձ անող թափանցիկ ամպերը, ծա-
ղիկները—այս ամենը մեզ համար ուրախու-
թեան պատճառ պիտի լինի: Մենք պիտի սի-
րենք երկիրն իբրեւ մեր ընդհանուր մօրը, պի-
տի համակրենք բնութեանը և նորա իւրա-
քանչիւր երեւոյթին: Ամենարժանագույն սերը
գէպի մարդկութիւնը մեր հոգու մէջ ամենա-
վսեմ ձգտմունք է զարթեցնում և այն սերի
ազդեցութեան տակ ոչ միայն մենք ինքներս
բաղդաւոր ենք լինում հազա ուրիշներին ևս
բաղդաւորութիւն ենք հաղորդում:

(Սմայլից). ԽՈՐԷՆ Ծ. Վ. ՍՏԵՓԸՆԷ:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԻՃԱԿԸ ՏՐԻԱՏԻՅ ՅԵՏՈՅ ԵՒ ՄԵԾՆ ՆԵՐՍԻՍԻ ԺԱՄԱՆԱԿԸ:

(Էսթրոնակութիւն *)



Մեր իւր իւր գահակալութիւնը նշանաւոր
մեզաւ մի շարք ներքին բարեկարգու-
թեամբ: Անվերջ պատերազմների երեսից փախ-
տական անձինք հաւաքուեցան Արշակի հովանու-

* Նախընթաց համար:

ներքոյ: Գործունէութիւնից ակամայ հեռացած մի քանի նախարար, որոնց թւում և Մամիկոնեան տան նահապետները, կրկին պաշտօնի կոչուեցան: Իսկ զլիաւոր հոգացողութեան առարկան Հայոց Հայրապետութիւնը՝ թափուր մնացած դահն էր: Փամանակի ներդրութիւններից տալովացած և յուսահատուած ժողովուրդը միակ միութարութիւնը եկեղեցու մէջ էր որոնում: Ժողովրդի ամեն դասի ներկայացուցիչների ժողով գումարեցին Արշակ թագաւորի նախագահութեամբ Հայրապետ ընտրելու: Ամենքի յոյսը ս. Գր. Լուսաւորչի տոհմի վրայ էր. ժամանակի արթուն հովիւներ և քրիստոնէութեան ջերմ պաշտպաններ միայն պարթեական տոհմն էր արտադրել: Ամենքն առ հասարակ զիտակցարար զգում էին, որ երկիրը կարօտ է բարոյական նորոգման և անհրաժեշտ էր ներքին կեանքի բարեփոխում: Ամեն ոք համոզուած էր, որ ուժաւոր թագաւորութիւնը անկարող էր իրադրծել այդ ծանր պահանջը առանց հեղինակաւոր Հայրապետի աջակցութեան, որ միշտ թագաւորների հաւատարիմ խորհրդակից և զահակից էր համարուում, ուստի և բոլոր ժողովականները սրտադին թախանձում էին թագաւորին Լուսաւորչի տոհմից ընտրել Հայոց հոգեւոր նախնապետութեան զուխը: «Ձի ընդ նորոգել այնր Աթոռոյ», ասում էին, «նորոգեցին պայծառ վարք աշխարհիս Հայոց»: Աերջապէս միաբան հաւանութեամբ որոշուեցաւ քահանայապետութեան վսեմ պաշտօնի կանչել ս. Յուսէի թոռան՝ Աթանազիոնէի որդի Մերսիսին, որ արքունական սենեկապետի պաշտօն էր վարում «հաւատարիմ ամենայն կարգաց կենաց թագաւորութեան ի ներքոյ և արտաքոյ»: Միայն բարետոհմիկ ժառանգականութեամբ չէր, որ Մերսէս ամբողջ ազգի համակրութիւնը գրաւեց, այլ կատարեալ վարքով իմաստութեամբ, մարդասիրութեամբ և այն բոլոր բարոյական յատկութիւններով որոնք յիշում է գարու սրտովը ասելով. «Անձանձրոյթ էր և ունէր զնախանձն Աստուծոյ և եռայր ս. Հոգւովն, այսպէս իսկ էր ամե-

նայնիւ կատարեալ յամենայնի: Եւ զաղքատս և զտառապեալս այնպէս սիրէր և ակնածէր ի վերայ նոցա, զի զիւր ինչ զհանգերձս և զկերակուր հասարակէր ընդ նոսա: Եւ նեղեաց և տարակուսեց զնական և վերակացու և ջատագով ամենայն զրկեց լինէր նա»:

Բայց հովուական պաշտօնի անհրաժեշտ նախապատրաստութեամբ և առաւելութիւններով օժտուած ժամանակի այս քաղաքագէտ գործիչը խոյս էր տալիս այդ ծանր կոչումից, պարզ տեսնելով ժամանակի բարոյական անկումը, անմիաբանութեան հոգին: Այս ծանր հանգամանքներից ընկճուած նա չէր կամենում լսել ոչ մի խնդիր, ոչ մի թախանձանք: Իսկ երբ մեծամեծները և թագաւորները հարկադրեցին Մերսիսին զիջանել ժողովուրդի կամքին և նորոգել ս. Գրիգորի գործերը և նորա առաջնորդութիւնը, այն ժամանակ ընտրեալը յառաջ անցաւ և հրապարակու յանդիմանեց ժողովուրդի խտտասրտութիւնը: «Անորէնք էք և պիղծ», ասում էր նա, ոչ կարեմ ձեզ հովիւ կալ և ոչ զձեր մեղսդ ընդ անձամբ առնուլ, ապա ոչ կարեմ աչառել և ոչ ձերում զօրութեանդ համբերել: Եւ այսօր տարապարտուց սիրէք զիս տարապարտ և վաղիւ առելի և թշնամի և թագն զզխոյ ձերմէ կոչիմիչ կապէք զիս»: Բայց Արշակ անուշադիր թողնելով այս իրաւացի բողոքը, հրամայեց հանել նորա զինուական հագուստը, կզերականի զվեստ հագցնել և սարկաւաղութեան կոչումն տալ: Եւ ապա ըստ նախկին սովորութեան մեծ փառքով բազմաթիւ նախարարների և եպիսկոպոսների առաջնորդութեամբ ուղարկեց Մերսիսին կեսարիա Հայրապետական ձեռնադրութիւն ընդունելու:

Հայրապետական դահ բարձրանալով Ս. Մերսէս հոգեւ բոլոր արիւթեամբ և եռանդով նուիրուեցաւ ժողովրդի բարոյական դատարարութեան և երկրի ներքին և արտաքին բարգաւաճման գործին: Նորա գործունէութիւնը երկու՝ եկեղեցական և քաղաքական ուղղութիւն ստացաւ: Այդ ուղղութիւնը ապագայ դարերի հայ հոգեւորականների գործու-

նէութեան բնորոշ յատկութիւնը եղաւ:

Մինչ և առաջ 365 թ. Աշտիշատի Ա. ժողովի սահմանադրութեամբ Մեծն Ներսէս զինուեցաւ հեթանոսութիւնից մնացած մի քանի բարբարոս սովորութիւններէ դէմ: Ժամանակի սխալ աշխարհակեցողութեամբ մարմնով արատաւոր անձինք, զանազան ակտերով վարակուած անձինք գրեթէ զրկուած էին գոյութեան իրաւունքից: Սոցա անդժաբար հալածուի էին բնակութեան ամեն տեղերից: Սոցա միակ ապաստանարանները անապատներն ու ամայի վայրերն էին: Խեղճ ազգատներն ու արտաքին հովանաւորութեան վերջին ծայր կարօտեալներն անգամ զրկուած էին ամեն տեսակ մարդասիրական խնամքից: Կարծես թէ քրիստոնէական զթասրտութիւնը անհետ վերացած էր ամենուրեք: Ս. Ներսէս առաջինը եղաւ, որ օգնութեան և պաշտպանութեան ձեռք կարկառեց տառապեալներին: Սոցա միակ միտքով եղաւ: Կարճ ժամանակամիջոցով քրիստոնէական սիրով տողորուած Ներսիսի նախաձեռնութեամբ և պետութեան հովանաւորութեամբ բարեգործական հաստատութիւններ՝ որբանոցներ, ուրկանոցներ, աղքատանոցներ, հիւրանոցներ հիմնուեցան երկրի զանազան գաւառներում: Իսկ Մեծ Հայրապետի անձնական օրինակը ամենքին դէպի ողորմածութիւն յորդորեց: Իշխանների առատաձեռն նուէրներով՝ աւաններով և աղարակներով, իսկ ժողովրդի ամեն տեսակ տուրքերով այդ հիմնարկութեանց գոյութիւնը ապահովուեցաւ: Եւ «էր այնուհետեւ տեսանել զաշխարհս մեր ոչ որպէս բարբարոս այլանդակեալ», վկայումէ Ստրենացին՝ «այլ որպէս զքաղաքացիս համեստացեալ»: Վասն զի ժողովուրդն իւր վրայ առաւ կարօտեալներին օգնելու, անհատներին պաշտպանելու, տնանկներին դարմանելու բարոյական և եղբայրսիրական պարտքը:

Ս. Ներսէս այսքանով չբաւականացաւ: Այս հիմնարկութիւնները ժամանակի ծախող աւերիչ ծիրաններից պաշտպանելու և սոցա գոյութիւնը յարատեւելու համար, ուրիշ խօսքով, մարդասիրութեան դադափարը ժողովրդի

մտքի մէջ միշտ վառ և կենդանի պահելու համար, անհրաժեշտ էր այդ բոլորի վրայ հսկող և հոգացող մի ազգեցիկ ոյժ պատրաստել: Այդ ոյժը վաղուց արդէն ընձեռել էր Հայ ազգին իւր Լուսաւորիչը: Պա Հայաստանեայց եկեղեցին էր, դա Հայոց հոգեւորականութիւնն էր:

Ժամանակի ընթացքում հասունացած այդ պահանջը քաջ ըմբռնելով Մեծն Ներսէս՝ իւր ուշադրութիւնը կենդրոնացրեց եկեղեցական կեանքի կազմակերպութեան վրայ, վանքերի և եկեղեցիների թիւը աւելացրեց, վանականութիւնը վայելուչ դիրքի և բարձրութեան հասցրեց: Այլ ևս վանականները, եպիսկոպոսները, միայնակեացները զիւզերում և քաղաքներում դատարկաշրջիկ թափառելու փոխարէն բարեգործական տեսչութիւն ստացան և ս. Աւետարանի քարոզութեան պաշտօնի կոչուեցան: Ժամանակակից պատմիչ խօսքերով ասելով. «Եւ յաճախէր շուք պատուի ամենայն եպիսկոպոսացն ընդ ամենայն երկիրս Հայոց և լուսաւորութիւն կարգի եկեղեցւոյ ամենապայծառ ծագեաց . . . կարգեցան կարգ կաթողիկէ եկեղեցեաց ամենայն վայելուցութեամբ և բազմացան կարգք սրբութեան պաշտամանցն և պաշտօնէիցն յաճախութիւն: Եւ բազմացոյց զկարգս եկեղեցեաց ի շէնս և յանշէնս»: Իսկ այս բոլորի շունչ և կենդանութիւն տուողը՝ եկեղեցիներին կից հիմնուած դպրոցներն էր, որտեղ ծաղկեցաւ յոյն և ասորի դպրութիւն և որոնք ժամանակին նշանաւոր գործիչներ մատակարարեցին ազգին: Այդ անդրանիկ գործիչներից մինն էր և Սադսարկաւագը:

(Շարունակելով), ԳԵՂՈՒԴ Ս. ԳԵԱՆՔԵՑԵԱՆ.



ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՇԱՐԿԱՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ.

Սեր նախնի եկեղեցասէր հայրերի գրաւոր վաստակները այլ իմն սիրով ու սրբտով մեծարող Ազգիս քաջարթուն Հովուա-